



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ԱՐԱՔԱԿԱՆ ԾՈՅԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԹԵՄԻՆ

P. O. BOX 8157, Salmiyeh 22052 – KUWAIT – Telephone: 5614392, Fax: 5638312

Լուրեր Քուէթի Ազգային Առաջնորդարանէն

Գերշ. Տէր Կորիւն Արք. Պապեան՝ Պահրէյնի եւ Քաթարի մէջ

1.- Պահրէյն

Թէեւ Քուէթի եւ Արաբական Ծոցի Թեմի հայութիւնը կ'ապրի գրիսաւորաբար Քուէթի, Շարժա-Տուպայի եւ Ապու Տապիի մէջ, այսուհանդերձ Պահրէյնն ու Քաթարը եւս աշխարհագրականօրէն ներառուած են Թեմիս վարչական սահմաններուն մէջ:

Պահրէյնի հայութիւնը երբէք մեծ թիւ չէ կազմած անցեալին եւ հաւանական ալ չէ, որ մօտիկ ապագային աւելի աճի: Ներկայիս այնտեղ կան թիւով շուրջ 10 հալ ընտանիքներ: Ոմանք ժամանակաւոր կերպով կը հաստատուին եւ ապա կը տեղափոխուին այլ քաղաքներ: Անոնց տեղ նորերը կու գան: Միայն քանի մը ընտանիքներ կան, որոնք երկար ժամանակաշրջանով կը գտնուին այնտեղ:

Պահրէյնի հայութեան փոքրաթիւ ըլլալուն պատճառով ցարդ չէ ունեցած որեւէ ազգային կառոյց. սակայն կայ Պահրէյնի սահմանակից Խոպար Սեւտիէ կոչուող նաֆթարդիւնաբերութեան կարելոր շրջան մը, ուր տարիներէ ի վեր կ'ապրին բաւական թիւով հայեր, գործի բերումով: Անոնց ներկայի թիւն է շուրջ 70 հոգի, որոնք յաճախ շաբաթավերջի օրերուն մուտք կը գործեն Պահրէյն, ուր կեանքը աւելի ազատ է՝ համեմատած իրենց ապրած երկրի կրօնական կաշկանդումներուն եւ կենցաղային օրէնքներուն:

Ինչպէս ծանօթ իրողութիւն է, մինչեւ այսօր քրիստոնէայ հոգեւորականներու մուտքը արգիլուած է Սեւտ Արաբիա. նոյնպէս արտօնուած չէ քրիստոնէական որեւէ հաւաքական արարողութիւն կատարել պաշտօնապէս: Հետեւաբար կարելի չէ Հայ Եկեղեցւոյ զաւակներու հոգեւոր կարիքներուն բաւարարութիւն տալ այնտեղ:

Ահա այս պատճառով է, որ Սրբազան Հայրը այցելելով Պահրէյն, հրաւիրած է Խոպար Սեւտիէի մէջ ապրող հայերուն, որպէսզի մասնակցին սուրբ պատարագին եւ հաղորդակից դառնան մեր եկեղեցւոյ սրբազան արարողութեանց:

Պահրէյնի մէջ ունինք հաւատացեալ եւ հայրենասէր, մտաւորական եւ վարչական բարձր կարողութիւններով օժտուած անձնաւորութիւն մը, յանձինս Տիկ. Ատրինէ Խաչատուրեանի, որ շուրջ 30 տարի է հաստատուած է այնտեղ. ան իր ազնիւ բնաւորութեամբ եւ կարելոր պաշտօնով, թագաւորական ընտանիքի հետ ունեցած յատուկ կապերով մեծապէս յարգուած է պետական շրջանակներու եւ դիւանագիտական մարմիններու կողմէ:

Սրբազան Հօր խնդրանքով եւ Տիկ. Ատրինէի նախաձեռնութեամբ, առաջին անգամ 10 Դեկտեմբեր 2004-ին, իսկ վերջերս՝ 15 Փետրուար 2008-ին Սրբազան Հայրը այցելած է Պահրէյն եւ մատուցած՝ սբ. պատարագ տեղւոյն Անգլիքան Եկեղեցւոյ մէջ: Յաւուր պատշաճի քարոզած եւ հոգեհանգիստ կատարած է ներկաներու խնդրանքով: Յատկանշելի է, որ օրուան սուրբ պատարագի երգեցողութիւնը կը ղեկավարէր Արաբական Միացեալ Էմիրութեանց Ժրաջան

հոգեւոր հովիւ՝ Տէր Արամ Քինյ. Տէյիրմէնճեանը: Սուրբ սեղանին կ'ըսպասարկէր բարեշնորհ Վարդան Սարկաւազ Աւետիսեանը՝ Խոպարի համայնքէն:

Սրբազան Հայրը իր քարոզին մէջ բարձրօրէն գնահատած է առհասարակ Պահրէյնի եւ Խոպարի հայութեան ջերմ հաւատքը, որուն շնորհիւ իրականութիւն դարձած է ամիսներէ ի վեր ծրագրուող այս հովուական այցելութիւնը: Յատուկ շնորհակալական խօսք ուղղած է Տիկ. Ատրիմէին, որ գորովագութ մօր մը նման իր հովանիին տակ առած է, Պահրէյնի եւ Խոպարի մէջ ապրող հայերը:

Այս առիթով, Խոպարէն եկած էին, Պահրէյնի փոքրաթիւ հայութեան միանալու շուրջ 50 հայեր, որոնք տարիներէ ի վեր զրկուած էին եկեղեցական արարողութիւններէն եւ հոգեկան մեծ բաւարարութեամբ մասնակից դարձան սբ. պատարագին: Կազմակերպչական աշխատանքներուն իր կարեւոր մասնակցութիւնը բերած էր, տարիներէ ի վեր Խոպար հաստատուած, Պրն. Սեդրակ Տազսեանը, որուն եւս Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնները յայտնեց:

Պատարագէն ետք, բոլոր ներկաները մեկնեցան "Պրիթիշ Բլապ", ուր ըստ նախօրօք կատարուած կարգադրութեան, տեղի ունեցաւ հաւաքական ճաշկերոյթ, որ շուտով՝ Սրբազան Հօր սեղանապետութեամբ եւ ներշնչող արտայայտութիւններով, ազգային երգերով ստեղծուած զուարթ մթնոլորտով, վերածուեցաւ խրախճանքի:

Ներկաները մեծապէս ոգեւորուած, նախ իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Սրբազան Հօր, որ այցի եկած էր հեռաւոր շրջաններու մէջ ապրող իր հօտի սիրելի զաւակներուն եւ փափաք յայտնեցին, որ տարուան ընթացքին գէթ երկու անգամ կրկնուէին այս այցելութիւնները, որպէսզի անոնք կարենային վայելել կրօնական եւ ազգային խանդավառութեան այս բացառիկ պահերը:

2.- Քաթար

Քաթարի մէջ հայութեան թիւը՝ վերջին տասնամեակներու ընթացքին փոփոխութիւններ ունենալով հանդերձ, համեմատած Պահրէյնին, աւելի շատ եղած է. սակայն մինչեւ չորս տարի առաջ այնտեղ գոյութիւն չէ ունեցած Առաջնորդարանիս թեմական կեանքին հետ կապուած որեւէ ազգային մարմին:

Անցնող 4-5 տարիներու ընթացքին երկրի տնտեսական արագ զարգացման եւ շինարարական հսկայական ծրագիրներու գործադրութեան պատճառով, տեղւոյն հայութիւնը սկսած է արագ թափով աճիլ: Վերջերս Քաթարի մէջ կատարուած շնչագրութիւնը ցոյց տուած է, որ այնտեղ կան ընտրելու իրաւունք ունեցող 228 անձինք: Հիմնուելով այս թիւին վրայ, կ'ենթադրուինք որ գաղութի ընդհանուր թիւը պէտք է ըլլայ 350-400: Հաւատացած ենք, որ 4-5 տարի ետք, այդ թիւը կը հասնի հազարի:

Քաթարը ունի բնական կազի այնպիսի մեծ պահեստներ, որ կը դասուի աշխարհի բնական կազ վաճառող գլխաւոր երկիրներու շարքին: 10-15 տարի առաջ երկրի կրօնական ու քաղաքական մթնոլորտը խիստ պահպանողական էր: Ներկայիս՝ շնորհիւ նոր Էմիրի ազատամիտ եւ լայնախոհ քաղաքականութեան, Քաթարի մէջ կը տիրէ կրօնական հանդուրժողականութեան եւ ընկերային ազատութեան մթնոլորտ մը:

Սրբազան Հայրը նախատեսելով գաղութի աճը, չորս տարի առաջ՝ քանի մը այցելութիւններ տալով Քաթար, յաջողած է Քաթարի մէջ առաջին անգամ ըլլալով, նշանակովի Ազգային Վարչութիւն մը կեանքի կոչել, որ բաւական լաւ աշխատանք տանելով, ստեղծած է նորակազմ համայնքին մէջ ազգային կառոյցներ ունենալու աւանդութիւնը: Յիշեալ Վարչութեան կապը եղած է ուղղակի Սրբազան Հօր հետ: Սբ. Ծննդեան եւ Սբ. Չատկի տօներուն առիթներով մատուցուած է այնտեղ սուրբ պատարագ: Տարուան ընթացքին կատարուած են կրօնական այլ արարողութիւններ, մշակութային եւ ընկերային որոշ ձեռնարկներ: Վերաբացուած է միօրեայ դպրոցը եւ այլն:

2006-ին որոշ դժուարություններ ստեղծուած են, որու պատճառով յիշեալ Վարչութեան աշխատանքները գրեթէ սառեցուած են: 2007-ի Ապրիլին գումարուած թեմիս Լիագումար տարեկան ժողովը, միաձայնութեամբ հաստատելով կատարուած առաջարկը, լիազօրած է Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ՝ Սրբազան Յայրը, որ կազմակերպէ ընտրութիւններ Քաթարի մէջ, ըստ Թեմիս Կանոնագրութեան ոգիին:

Առ այդ Քաթարի Ազգային Վարչութիւնը կեանքի կոչած է Ընտրական Յանձնախումբ մը, որպէսզի կատարէ նախապատրաստական աշխատանքները. ապա հրաւիրած է Սրբազան Յայրը մատուցելու սբ. պատարագ Սբ. Ծննդեան տօնին առիթով եւ նախագահելու 17 Յունուար 2008-ին՝ յաւարտ սբ. պատարագի տեղի ունենալիք ընտրութեան:

Սրբազան Յայրը՝ ընկերակցութեամբ Տէր Արամ Քինյ. Տէյիրմէնճեանի, ժամանած է Քաթար, Յինգշաբթի 16 Յունուարին եւ յաջորդ օրը՝ Ուրբաթ առաւօտեան մատուցած է սբ. պատարագ. քարոզած է յաւուր պատշաճի եւ կատարած է Յոգեհանգիստ: Իր քարոզին մէջ Սրբազան Յայրը անդրադարձած է Քաթարի մէջ կրօնական եւ ազգային կեանքը առաւել չափով կազմակերպելու անհրաժեշտութեան: Իր գնահատանքը յայտնած է շուրջ երեք տարիներ իր լաւագոյնը ի գործ դրած շրջանաւարտ Վարչութեան. միաժամանակ կոչ ուղղած է համայնքի բոլոր անդամներուն զօրավիգ կանգնիլ շուտով ընտրուելիք նոր Վարչութեան:

Յիշեալ ընտրութիւնը կայացած է յաւարտ սբ. պատարագի՝ խաղաղ եւ համերաշխ մթնոլորտի մէջ: Ընտրուած է նոր Ազգային Վարչութիւն, որ անցնելով աշխատանքի, արդէն իսկ կը կատարէ իր անմիջական պարտականութիւնները եւ կը մշակէ երկար ժամանակի վրայ գործադրուող ծրագիրներ:

Ուրախ ենք, որ Միօրեայ Մեսրոպեան Վարժարանը, որ կ'օգտագործէ տեղւոյն Լիբանանեան նորակառոյց դպրոցին դասարանները, արդէն ունի 25 աշակերտ: Շուտով Վարչութիւնը կը նշանակէ Երիտասարդական Յանձնախումբ, ինչպէս նաեւ դպրոցի գործերով զբաղուող առանձին Կրթական Մարմին մը:

Ինչպէս արդէն յիշեցինք, ամէն շաբաթ Քաթար կը ժամանեն Լիբանանէն, Սուրիայէն, Յորդանանէն, Քանադայէն, Ամերիկայէն եւ այլ երկիրներէն, զանազան մասնագիտութեանց եւ ասպարէզներու տէր հայեր: Յուսանք Սրբազան Յօր եւ տեղւոյն ազգային մարմիններու միացեալ ճիգերը կ'արդիւնաւորուին, որպէսզի յառաջիկայ ամիսներու եւ տարիներու ընթացքին Քաթարի մէջ եւս ունենանք շատ աւելի լաւ կազմակերպուած հայ համայնք մը:

ԴԻԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ